



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

N _____

_____ 2012 թ.

<Սնաբեներգո> ՍՊԸ լիազոր անձ
պարոն Ս.Եղիազարյանին
հասցե՝ ք.Երևան, Սարյան 10-4
պատճենը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետ
պարոն Ա.Սարգսյանին

Կից ուղարկվում է Ձեր 27.12.2012թ. գանգատի վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 03.02.2012թ. թիվ 5/6 որոշումը:

Առդիր՝ 3 թերթ:

Հարկային մարմնի գանգատարկման
հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 5/6

3 փետրվարի 2012թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 24.01.2012թ-ի նիստում քննության է առնվել «Սնաբեներգո» ՍՊԸ 27.12.2011թ-ի գանգատը «ԿԱ ՊԵԿ Քանաքեռ-Զեյթուն ՀՏ 04.11.2011թ-ի թիվ 1001275 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն «ԿԱ ՊԵԿ Քանաքեռ-Զեյթուն ՀՏ 04.11.2011թ-ի թիվ 1001275 ստուգման ակտի 5-րդ կետից նվազեցվել է 5912500 դրամ:

Համաձայն «ԿԱ ՊԵԿ նախագահի 15.09.2011թ. թիվ 1001275 հանձնարարագրի «Օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «Սնաբեներգո» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 04.11.2011թ-ին կազմվել է թիվ 1001275 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 10.594.885 դրամ:

Ընկերության բողոքը վերաբերում է ստուգման ակտով ԱԱՀ-ի գծով լրացուցիչ առաջադրված պարտավորությանը:

Ստուգման ակտի 5-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ ներկայացված սկզբնական փաստաթղթերի ստուգումից պարզվեց, որ Ընկերության կողմից 2011թ-ի մայիս ամսին խախտվել է «ԱԱՀ-ի մասին» «Օրենքի 20 հոդվածի պահանջները, որի հետևանքով այդ հաշվետու ժամանակաշրջանում որպես գնորդ ձեռքբերված ապրանքների դիմաց՝ «Նակոյ» ՍՊԸ կողմից 05.05.2011թ-ին դուրս գրված թիվ Ա4977563129 հարկային հաշվի՝ գումարով 29415000 դրամ + ԱԱՀ 5883000 դրամ և «Մաքսհուր» ՍՊԸ կողմից 02.05.2011թ-ին դուրս գրված թիվ Ա1043189147 հարկային հաշվի՝ գումարով 147300 դրամ + ԱԱՀ 29500 դրամ վերաբերյալ տեղեկությունները ՀՏ ներկայացվել են սահմանված ժամկետից ուշ՝ 2011թ-ի հունիսի 20-ի փոխարեն ներկայացվել է 2011թ-ի սեպտեմբեր ամսին: Ընկերության կողմից 2011թ-ի մայիս ամսին ստացած վերջին նշված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները՝ ընդամենը գումարով 5912500 դրամ, ներառվել են 2011թ-ի մայիս ամսվա ԱԱՀ-ի հաշվարկում ցույց տրված հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարների մեջ: Նշվածից հետևում է, որ ընկերության կողմից խախտվել է «ԱԱՀ-ի մասին» «Օրենքի 43.1 հոդվածի պահանջները, ըստ որի ձեռքբերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով այն հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները, որոնք ներկայացվել են (ներառվել են տեղեկանքում) հարկային հաշիվների ստացմանը հաջորդող որևէ հաշվետու ժամանակաշրջանում, հաշվանցվում են տեղեկությունների ներկայացման ժամանակաշրջանի համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկով: Նշված խախտման հետևանքով ընկերության կողմից 2011թ-ի մայիս ամսվա ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկում հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարն ավել է ցույց տրվել 5912500 դրամ, որի արդյունքում նույն հաշվետու ժամանակաշրջանում բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը պակաս է ցույց տրվել 5912500 դրամ:

Հիմք ընդունելով «Ավելացված արժեքի հարկի մասին» «Օրենքի 43-րդ հոդվածի, «Հարկերի մասին» «Օրենքի 23-րդ և 25-րդ հոդվածների դրույթները ԱԱՀ-ի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 10592040 դրամ:

«Սնաբեներգո» ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

«Ավելացված արժեքի հարկի մասին» «Օրենքի 20-րդ և 43.1 հոդվածների, «Կառավարության 07.07.2011թ. թիվ 937-Ն որոշմամբ նախատեսված դրույթների համատեքստում վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ.

- Ընկերությունը պարտավոր է ՀՏ ներկայացնել նշված գործարքների վերաբերյալ տեղեկություններ, (հիմք՝ «ԱԱՀ-ի մասին» «Օրենքի 20-րդ հոդված),

- Ընկերությունն իրավունք ունի ինքնուրույն հայտնաբերել և ճշգրտել արդեն իսկ ՀՏ ներկայացված տեղեկությունները՝ ճշգրտված տեղեկանք ներկայացնելու միջոցով (հիմք՝ «ԱԱՀ-ի մասին» «Օրենքի 33 հոդված և «Կառավարության 07.07.2011թ-ի թիվ 937-Ն որոշման 7-րդ կետ),

- Ընկերությունը միայն սահմանված կարգով և ժամկետում ՀՏ ներկայացրած (այլ ոչ թե սխալ ներկայացրած) տեղեկությունները, պետք է ներառի հետագա որևէ հաշվետու ժամանակաշրջանի համար ՀՏ ներկայացվող տեղեկանքում, (հիմք՝ «ԱԱՀ-ի մասին» «Օրենքի 43՝

հողվածի երկրորդ պարբերության և ՀՀ կառավարության 07.07.2011թ-ի թիվ 937-Ն որոշման 10-րդ կետ):

Տվյալ դեպքում Ընկերության կողմից ընդամենը 2011թ-ի սեպտեմբեր ամսին վերը նշված իրավական նորմերին համապատասխան ճշգրտվել է 2011թ-ի մայիս ամսվա համար հունիսին ՀՏ ներկայացված տեղեկանքը, քանզի, հայտնաբերվել է, որ կատարված ձեռքբերումների վերաբերյալ տեղեկությունները ծրագրային բացթողման պատճառով գրվել են իրացումների համար նախատեսված տողերում: Ինչն ամենևին չի նշանակում, թե Ընկերությունը սեպտեմբեր ամսին նոր ներկայացրել է մայիս ամսին կատարված գործարքների վերաբերյալ երբևիցե ՀՏ չներկայացված տեղեկությունները: Ավելին, Ընկերությունը նույնիսկ իրավունք չունի մայիսին կատարված գործարքների վերաբերյալ հունիսին ՀՏ ներկայացնելուց հետո նորից այդ գործարքների վերաբերյալ տեղեկություն ներառել սեպտեմբերին ՀՏ ներկայացվող տեղեկանքում: Բացի այդ, ստուգման ակտը կազմելիս հաշվի չի առնվել, որ համաձայն վերը նշված կառավարության որոշման 14 կետի, տեղեկությունները համարվում են ԱԱՀ վճարողի կողմից չներկայացված միայն այն դեպքում, երբ վերջինս սահմանված կարգով և ժամկետում տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ընդհանրապես տեղեկանք չի ներկայացրել, այլ ոչ թե ներկայացրել է «Ձեռքբերում» և «Իրացում» տողերի վրիպակով լրացմամբ:

Մինչդեռ ստուգման ակտում նշվել է, որ Ընկերության կողմից մայիս ամսին խախտվել է ՀԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի պահանջները և տեղեկությունները ՀՏ են ներկայացվել սահմանված ժամկետից ուշ և հետագա դատողությունները կատարվել են այս հիմքի վրա, ինչը սակայն բացարձակ չի համապատասխանում իրականությանը, զուրկ է փաստական ապացույցներից և սոսկ ենթադրություն է:

Փաստորեն ստացվում է, որ Ընկերությունը գործել է օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ճշգրտել է նախկինում ՀՏ ներկայացված տեղեկանքը, իսկ ՀԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքում նշված չէ որևէ սահմանափակում պարունակող դրույթ, համաձայն որի նման հանգամանքներում Ընկերությունն իրավունք չունենար հաշվանցել մայիսին կատարված ձեռքբերումներին վերաբերող ԱԱՀ-ն:

Քանի որ, ինչպես արդեն նշվել է Ընկերությունը մայիս ամսում կատարված ձեռքբերումների վերաբերյալ հունիսին ՀՏ ներկայացված տեղեկանքում գրառումները կատարել է գործարքների վերաբերյալ բոլոր սահմանված վավերապայմաններով հանդերձ, ուղղակի ոչ ճիշտ հերթականությամբ կամ ձևով (այն էլ ծրագրային բացթողման պատճառով), սակայն բովանդակային առումով Ընկերությունը կատարել է իր պարտականությունները՝ ներկայացրել է ձեռքբերումների վերաբերյալ տեղեկություն, ուստի ստուգումն իրականացնող անձից պարտավոր էին հաշվի առնել վերը նշված իրավական նորմերի պահանջները և զերծ մնալ լրացուցիչ պարտականություններով ծանրաբեռնելուց:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցչի ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Ընկերության կողմից 13.06.2011թ-ին էլեկտրոնային եղանակով ներկայացվել է 2011թ-ի մայիս ամսվա ընթացքում «Դուրս գրված (գնորդներին տրված) և (կամ) մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանք»-ը (այսուհետ նաև տեղեկանք): Տեղեկանքի ՀԱԱՀ վճարողի կողմից հաշվետու (ճշտգրտման) ժամակակաշրջանում դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ» մասում ընկերության կողմից նշվել է «Մաքսիուր» ՍՊԸ-ին 02.05.2011թ-ին դուրս գրված թիվ Ա1043189147 և «Նակոյլ» ՍՊԸ-ին 05.05.2011թ-ին դուրս գրված թիվ Ա4977563129 հարկային հաշիվների վերաբերյալ տվյալները, իսկ «Մատակարարներից հաշվետու (ճշտգրտման) ժամակակաշրջանում ստացված հարկային հաշիվների վերաբերյալ» մասում՝ Հայաստանի էլեկտրական ցանցերից 05.05.2011թ-ին ստացված թիվ Ա 4367804255 հարկային հաշիվ վերաբերյալ տվյալները:

Տվյալ դեպքում ընկերության կողմից 2011թ-ի մայիս ամսվա համար ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկով հաշվանցման ենթակա չէին տեղեկանքում նշված «Մաքսիուր» ՍՊԸ 02.05.2011թ-ի թիվ Ա1043189147 և «Նակոյլ» ՍՊԸ 05.05.2011թ-ի թիվ Ա4977563129 հարկային հաշիվներում արտացոլված ԱԱՀ-ի գումարները, քանի որ այդ հարկային հաշիվների վերաբերյալ տվյալները նշվել են տեղեկանքի ՀԱԱՀ վճարողի կողմից հաշվետու (ճշտգրտման) ժամակակաշրջանում դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ» մասում: Այսինքն, ըստ էության, կարելի է պնդել, որ «Մաքսիուր» ՍՊԸ-ից և «Նակոյլ» ՍՊԸ-ից հաշվետու ժամանակաշրջանում ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություն չի ներկայացվել:

16.09.2011թ-ին էլեկտրոնային եղանակով ընկերության կողմից ներկայացվել է «Դուրս գրված (գնորդներին տրված) և (կամ) մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանք»-ը, որով ճշգրտվել են 2011թ-ի մայիս ամսվա համար ներկայացված տեղեկանքում արտացոլված տվյալները: Մասնավորապես, նշված տեղեկանքի ՀԱԱՀ վճարողի կողմից հաշվետու

(ճշգրտման) ժամակակաշրջանում դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ՝ մասում նշվել է <Հայաստանի էլեկտրական ցանցեր> 05.05.2011թ-ի թիվ Ա4367804255 հարկային հաշվի վերաբերյալ տվյալները, իսկ <Մաքսհուր> ՍՊԸ-ի 02.05.2011թ-ի թիվ Ա1043189147 և <Նակոյլ> ՍՊԸ-ի 05.05.2011թ-ի թիվ Ա4977563129 հարկային հաշիվների վերաբերյալ տվյալները նշվել են <Մատակարարներից հաշվետու (ճշտգրտման) ժամակակաշրջանում ստացված հարկային հաշիվների վերաբերյալ> մասում:

Վերոգրյալից հետևում է, որ ընկերությունը 2011թ-ի մայիս ամսվա համար ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկով թույլ է տվել խախտում, որը ճշգրտել է (ուղղել է) միայն 16.09.2011թ-ին ներկայացված <Դուրս գրված (գնորդներին տրված) և (կամ) մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանք>-ով: Այսինքն, եթե <Մաքսհուր> ՍՊԸ-ի 02.05.2011թ-ի թիվ Ա1043189147 և <Նակոյլ> ՍՊԸ-ի 05.05.2011թ-ի թիվ Ա4977563129 հարկային հաշիվներում արտացոլված ԱԱՀ-ի գումարների 2011թ-ի մայիս ամսվա ԱԱՀ-ի հաշվարկով կատարված հաշվանցումն չընդունելու հետևանքով ստուգման ակտով լրացուցիչ գանձման է առաջադրվել 5912500 դրամ ԱԱՀ, ապա հաշվի առնելով կատարված սխալի ճշգրտման հանգամանքը, ստուգման ակտով պետք է արձանագրվեր նաև նույն գումարի չափով (5912500 դրամ) ԱԱՀ-ի նվազեցում:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է հետևյալ եզրակացությունը.

<Սնաբեներգո> ՍՊԸ կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Քանաքեռ-Զեյթուն ՀՏ 2011 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 1001275 ստուգման ակտի վերաբերյալ ներկայացված դիմում-գանգատը համարել հիմնավոր, իսկ դրա վերաբերյալ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից գանգատարկման խորհուրդ ներկայացված որոշման նախագիծը՝ ոչ հիմնավոր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերությունը 2011 թվականի սեպտեմբեր ամսին հարկային մարմին ներկայացված՝ դուրս գրված (գնորդներին տրված) և (կամ) մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքով ճշգրտել է 2011 թվականի մայիս ամսվան վերաբերող տեղեկանքը և հետևաբար, ընկերության նկատմամբ կիրառելի չեն ինչպես <Հարկերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով սահմանված տույժերը, այնպես էլ նույն օրենքի 25-րդ հոդվածով ու <Ավելացված արժեքի հարկի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով սահմանված տուգանքները:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը կրկին անգամ ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները, ինչպես նաև հաշվի առնելով որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդի եզրակացությունը, գտնում է, որ գանգատը հիմնավոր է:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Քանաքեռ-Զեյթուն ՀՏ 04.11.2011թ-ի թիվ 1001275 ստուգման ակտի 5-րդ կետը:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ